ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12.12.2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան.
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան.
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Աքվատիկ» ՍՊԸ-ի և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ «Աքվատիկ» ՍՊԸ-ի մասով՝ հաշվի առնելով ԳՕՍՏ-ի պահանջները, ինչպես նաև արտադրության առանձնահատկություններն առ այն, որ տեխնիկական բնութագրում առկա որոշ ցուցանիշներ չեն կարող լինել հաստատուն թվեր՝ անհրաժեշտ է վերջիններիս համար նախատեսել շեղման հնարավորություն ըստ ԳՕՍՏ-ի, «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի մասով՝ 2-րդ չափաբաժնի մասով հաշվի առնելով ԳՕՍՏ-ի պահանջները, ինչպես նաև արտադրության առանձնահատկություններն առ այն, որ տեխնիկական բնութագրում առկա որոշ ցուցանիշներ չեն կարող լինել հաստատուն թվեր՝ անհրաժեշտ է վերջիններիս համար նախատեսել շեղման հնարավորություն ըստ ԳՕՍՏ-ի, իսկ 4-րդ չափաբաժնի մասով հաշվի առնելով նպանատիպ ապրանքատեսակների ԳՕՍՏ-ի պահանջները, ինչպես նաև արտադրության առանձնահատկություններն առ այն, որ տեխնիկական բնությագրում առկա որոշ ցուցանիշներ չեն կարող լինել հաստատուն թվեր՝ անհրաժեշտ է վերջիններիս համար նախատեսել շեղման հնարավորություն ըստ ԳՕՍՏ-ի: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 21.12.2018թ. ծանուցել մասնակիցներին սահմանված կարգով շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները:

11.12.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցների ԷԱՃ ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներն առկա են, բացառությամբ «Աքվատիկ» ՍՊԸ-ի, որի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքը: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 21.12.2018թ. ծանուցել «Աքվատիկ» ՍՊԸ-ին սահմանված կարգով շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը:

11.12.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն, բացառությամբ Ա/Ձ Համլետ Հովսեփյանի, ով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 124000 (մեկ հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ա/Ձ Համլետ Հովսեփյանի հայտը մերժվեց (հարկային պարտավորությունները գերազանցում են Օրենքով սահմանված շեմը): Քանի որ Eauction համակարգը թույլ չէր տալիս մասնակցին մերժել ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքերով, ուստի լիազոր մարմնին հետադարձ կապով խնդրի լուծման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել: Լիազոր մարմնի բանավոր առաջարկի հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը www.eauction.armeps.am կայքում մերժման ենթակա մասնակցի ներկայացրած որակավորման փատաթղթերը գնահատել է անբավարար, որից հետո Ա/Ձ Համլետ Հովսեփյանին համակարգի կողմից ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել՝ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Անհամապատասխանությունների շտկման համար Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո գնահատող հանձնաժողովը կրկին անգամ մերժման ենթակա մասնակցի ներկայացրած որակավորման փատաթղթերը պետք է գնահատեր անբավարար, և արդյունքում Ա/Ձ Համլետ Հովսեփյանի ներկայացրած հայտը մերժվեր:

Սակայն, քանի որ Ա/Ձ Համլետ Հովսեփյանի կողմից 25.12.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք՝ ծածկագիրը ԳԲՔԱ-ԱՄ-2018/114, համաձայն որի ընկերությունը բողոքարկում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իր ներկայացրած հայտը մերժելու մասին որոշումը, ուստի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կասեցվել է:

Համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի առ 14.01.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2018/114 որոշման՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ա/Ձ Համլետ Հովսեփյանի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցվել է: Հետևաբար 3-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Համլետ Հովսեփյանիը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող:

1.2 16.01.2019թ. գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Վ. Ասատրյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան